Հավելված N 1
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1465-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ ԿԱՐՃ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԿԱՄ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

NN ը/կ	Անձնագրային գործողության տեսակը	Վճարի չափը
1.	Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալը կամ փոխանակելը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում	20000 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը
2.	Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալը կամ փոխանակելը՝ 2-4 աշխատանքային օրվա ընթացքում	10000 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

08_1465

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1465-Ն որոշման

Ձև

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅՈՒ ԱՆՁՆԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԿԱՄ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

քաղ. Երևան _____ _____ 200 թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, այսուհետ՝ կատարող, ի դեմս _____ -ի, որը գործում է ըստ _____ - ի, մի կողմից, և _____-ը, այսուհետ՝ պատվիրատու, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն սույն պայմանագրի՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուին մատուցել անձնագիր տալու կամ փոխանակելու կապակցությամբ կարճ ժամկետում աշխատանքներ կատարելու վճարովի ծառայություն։

1.2. Ծառայությունը մատուցվում է _____ -րդ աշխատանքային օրը։

1.3. Ծառայությունները մատուցված են համարվում պատվիրատուին անձնագիրը տրամադրելու վերաբերյալ փաստաթղթի ստորագրման պահից։

2. Կողմերի պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է ծառայությունները մատուցել պատշաճ որակով և պայմանագրով նախատեսված ժամկետում։

2.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել ծառայությունների մատուցման համար նախատեսված գումարը։

3. Պայմանագրի գինը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է ---------- դրամ, որը լրիվ վճարված է պայմանագիրը կնքելու պահին, իսկ վճարման անդորրագիրը կցվում է:

3.2. Պայմանագրի գինը չի ներառում օրենքով սահմանված պետական տուրքի գումարը:

4. Այլ պայմաններ

4.1. Պայմանագրով նախատեսված ժամկետները խախտելու յուրաքանչյուր օրվա համար կատարողը պատվիրատուին վճարում է տուժանք՝ պայմանագրի գնի 200 տոկոսի չափով:

4.2. Եթե ծառայությունները մատուցելու համար նախատեսված ժամկետում պատվիրատուն չի ներկայանում անձնագիրն ստանալու, ապա ծառայությունների մատուցումը համարվում է պատշաճ կատարված, և կատարողն ազատվում է սույն պայմանագրով նախատեսված տուժանքի վճարման պարտավորությունից:

4.3. Կատարողն ազատվում է սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված պատասխանատվությունից, եթե պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով:

4.4. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեներն ու վավերապայմանները

Պատվիրատու	Կատարող
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ